

Թիւ 24248  
Փետր. 7, 1974

Հոգեշնորհ  
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան  
Հովիւ Ս. Յարութիւն Հայց. Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Սառլթ Միլուոքի.

Սիրելի Հայր Արշակ,

Ստացած ենք Յունուար 31, 1974 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 21ին գումարուած համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժիական Խորհուրդիդ նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժիական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց եւ Եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց առնչուածներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Հարլի Բատէմեան  
Կիլպլըթ Ճանտիկեան  
Պարսամ Պարսամեան  
Սամ Հաճինեան  
Փիթըր Սահակեան